

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2009 թվականի գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին

«Հանրակրթական ոլորտի բարեփոխումներ» գերակա խնդրի լուծմանն ուղղված՝ հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնման ուղղությամբ 2009 թվականի երրորդ եռամսյակում Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում (ԿՏԱԿ) կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Գումարվել է ԿՏԱԿ-ի խորհրդի արտագնա նիստը (24.07.2009թ., Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի դպրոցում), որի ընթացքում խորհրդի անդամները աշխատանքի վայրում ծանոթացել են Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) գործունեությանը, քննարկվել ու հաստատվել է երկրորդ եռամսյակի հաշվետվությունը:
2. Իրականացվել են 644 դպրոցներ ընդգրկող Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (ՀԴԻՑ) կառավարման ու պահպանման աշխատանքները.
 - իրագործվել է ՀԴԻՑ-ի աշխատանքի ամենօրյա հսկողությունը, ապահովվել է ՀԴԻՑ-ի դպրոցների հետ օպերատիվ երկկողմանի աշխատանքային կապը,
 - կատարվել է ՀԴԻՑ-ի աշխատանքի մասին ամսական հաշվետվությունների քննարկումն ու վերլուծությունը,
 - իրականացվել է ՀԴԻՑ-ի ընթացիկ աշխատանքային վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանի շահագործումը,
 - իրականացվել է ՀԴԻՑ-ի դպրոցներում վնասված սարքավորումների հաշվառումը,
 - նախապատրաստվել և հայտարարվել է ՀԴԻՑ-ի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման մրցույթը:

3. Կազմակերպվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՅԿ) շահագործման աշխատանքը Գեղարքունիքի մարզի Գետիկ և Դպրաբակ, Լոռու մարզի Շամուտ և Ձյունաշող համայնքներում: Իրականացվել է ՇԻՅԿ-ի շահագործման ընթացքի վերահսկումը, ամսական հաշվետվությունների քննարկումը և վերլուծությունը, կատարվել են պարբերական այցելություններ ՇԻՅԿ-ի գործունեությունը տեղում ստուգելու նպատակով: Նշված ժամանակահատվածում ՇԻՅԿ-ի դասընթացներին մասնակցել են 85 աշակերտներ, վերապատրաստվել` 31 ուսուցիչներ:
4. Նախապատրաստվել, հայտարարվել և ամփոփվել է «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ ուսումնաօժանդակ ձեռնարկի` «Ինտերնետի օգտագործման ուղեցույցի» ու կից էլեկտրոնային նյութի ստեղծման ու հրատարակման» ծառայության ձեռքբերման մրցույթը:
5. Նախապատրաստվել և հայտարարվել է «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում նոր ընդգրկված 320 դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների վերապատրաստում» ծառայության ձեռքբերման մրցույթը:
6. Նախապատրաստվել են «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում նոր ընդգրկված 320 դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչների վերապատրաստում» ծառայության ձեռքբերման մրցույթի հայտարարման համար անհրաժեշտ փաստաթղթերը:
7. Իրականացվել է «Կրթական համալիր էջ» ինտերնետային կրթական պորտալի (www.armedu.am) շահագործումը.
 - ապահովվել է պորտալի «Տեղեկատվություն» բաժնի գործունեությունը` պարբերաբար թարմացվել են գործող ենթաբաժինները,
 - լրացվել և հարստացվել է «Կրթական նյութեր» բաժնի էջերի բովանդակությունը, «Պաշարների կատալոգում» ստեղծվել են նոր ենթաբաժիններ, տեղադրվել են հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը,

- պորտալի կառուցվածքում ավելացվել են տարբեր կազմակերպությունների էջեր (օրինակ՝ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության էջը), ստեղծվել է «Պարույր Սևակ» գրական–մշակութային ակումբը, նախապատրաստվել է «Հայ սփյուռք» ենթակայքը,
- կազմակերպվել է «Ֆորումներ» և «Վիրտուալ համայնքներ» բաժինների բնականոն աշխատանքը, «Հարցումներ և քվեարկություն» բաժնում առաջադրվել են կրթական ոլորտին առնչվող նոր հարցեր և դրանց շուրջ կազմակերպվել քվեարկություններ,
- նախապատրաստվել և ուսումնական հաստատությունների սովորողների ու մանկավարժների համար հայտարարվել է «Դպրոցական ակնթարթ» խորագրով լուսանկարների մրցույթը, ստեղծվել է մրցույթի պատկերասրահը,
- իրականացվել է ԿԳՆ ստորաբաժանումներից ու տարբեր կրթական հաստատություններից ստացված տեղեկատվական նյութերի և կրթական փաստաթղթերի տեղադրումը պորտալի համապատասխան բաժիններում,
- շահագործվել է պորտալի անգլերեն բաժինը՝ «Տեղեկատվություն» բաժնում ավելացվել են կրթական կազմակերպությունների էջեր, թարմացվել են «Նորություններ» և «Հայտարարություններ» ենթաբաժինները, «Կրթական նյութեր» բաժնում ավելացվել են օգտակար հղումներ ու տեղեկատվություն կրթական պաշարների մասին, մշակվել և «Վիրտուալ հանդիպում» բաժնում առաջադրվել են կրթական ոլորտին առնչվող նոր հարցեր և դրանց շուրջ կազմակերպվել քվեարկություններ:

8. Իրականացվել է ԿՏԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքի (www.ktak.am) և ԿՏԱԿ-ի էլեկտրոնային կառավարման համակարգի շահագործումը:

9. Կատարվել են աշխատանքներ էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների ներդրման ուղղությամբ.

- կազմվել և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ է ներկայացվել «Էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների բազմացման աշխատանքներ՝ Հայաստանի բոլոր դպրոցները դրանցով ապահովելու նպատակով» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ամփոփիչ հաշվետվությունը,

- ուսումնասիրվել են Հայաստանի հանրակրթական դպրոցների 7-9-րդ դասարանների համար «Քվանտ» վարժարանի մշակած Ռուսաց լեզու և Անգլերեն լեզու առարկաների համակարգչային ծրագրերի նախնական տարբերակները և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ներկայացվել է մասնագիտական կարծիք:
10. Ավարտվել են Համակարգիչների շրջանառու համակարգի շրջանակներում անվճար կարգով համակարգչային սարքավորումներ ստացող դպրոցների հետ նվիրաբերության պայմանագրերի կնքման և ստորագրման աշխատանքները և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ին է տրամադրվել 148 դպրոցների պայմանագրերի փաթեթը:
11. Իրականացվել են աշխատանքներ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործունեության և զարգացման ուղղությամբ, մասնավորապես՝
- ամփոփվել են հանրակրթության 2008-2009 ուսումնական տարվա վիճակագրական տվյալները, որոնք մի քանի ամիսների ընթացքում հավաքվել, մուտքագրվել և դասակարգվել են շտեմարանում: Արդյունքները ներկայացվել են ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը, ՀՀ կրթության և գիտության նախարարությանը,
 - նախապատրաստվել և տպագրվել է «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» հաշվետվային ձևը 2009-2010 ուսումնական տարվա համար, իրականացվել են դրանց տեղափոխման և մարզպետարաններին հանձնման աշխատանքները,
 - Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների ամփոփ վիճակագրական տվյալների հիման վրա նախապատրաստվել և հրատարակման է հանձնվել «Հանրակրթությունը Հայաստանում» տարեկան վիճակագրական տեղեկագիրը, որը պարունակում է ՀՀ հանրակրթության հիմնական ցուցանիշները բնութագրող 48 աղյուսակներ, դիագրամներ և վիճակագրական վերլուծություն,
 - պարբերաբար ՀՀ ԿԳՆ, Ազգային վիճակագրական ծառայություն, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ է ներկայացվել տարբեր վիճակագրական տվյալներ պարունակող լրացուցիչ տեղեկատվություն,

- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի (ՅՈՒՆԻՍԵՖ) «Նախադպրոցական կրթության տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձևավորված աշխատանքային խումբը տեղեկատվական համակարգի ստեղծմանն առնչվող հարցերը քննարկելու նպատակով մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների, մարզերի նախադպրոցական հաստատությունների տնօրենների և գլխավոր հաշվապահների մասնակցությամբ կազմակերպել է սեմինար-խորհրդակցություններ Տավուշի և Սյունիքի մարզերում, կազմվել և ՅՈՒՆԻՍԵՖ է ներկայացվել ընթացիկ հաշվետվություն կատարված աշխատանքների մասին,
- կատարվել են նախապատրաստական աշխատանքներ (հարցումներ, կարծիքների վերլուծություններ) մասնագիտական կրթության տեղեկատվական համակարգի ստեղծման ուղղությամբ:

12.33 կրթության և գիտության նախարարի հանձնարարությամբ մշակվել և ներկայացվել է «Տեղեկանք էստոնիայի «Վագրի ցատկ» նախագծի օրինակով Հայաստանի հանրակրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ծրագրի իրականացման վերաբերյալ» (փաստաթուղթը հրապարակված է ԿՏԱԿ-ի ինտերնետային կայքում):

13. Կազմակերպվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.08.2009թ. հ.756-Ա/Ք հրամանով ստեղծված` Համակարգչային գրագիտության ուսուցման և ծրագրի նախագծի փորձնական փուլի կատարումն ու «ՏՀՏ-ն դպրոցում» ծրագրի ուսումնասիրությունն ապահովող աշխատանքային խմբի աշխատանքները.

- գումարվել են նիստերը (03.09.2009թ., 10.09.2009թ.),
- կազմակերպվել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի ստեղծած «Ուսում 1» համակարգի փորձաքննությունը ԿՏԱԿ-ում, Կրթության ազգային ինստիտուտում և «Քվանտ» վարժարանում, կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչություն է ներկայացվել «Ուսում» համակարգի փորձնական ներդրման համար ընտրված դպրոցների ցուցակը,
- «Միկրոաշխարհներ ԼՈԳՈ»-ի (“Microworlds LOGO”) էլեկտրոնային ուսուցողական միջավայրի կիրառման արդյունավետության և դպրոցական

ծրագրում այն ընդգրկելու անհրաժեշտությունն ուսումնասիրելու նպատակով մշակվել է հարցաթերթիկ և կատարվել են հարցումներ այդ միջավայրում աշխատանքի փորձ ունեցող դպրոցներում:

14. Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) բնագավառի ծրագրերի համակարգման, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով ԿՏԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են ՏՀՏ ոլորտին առնչվող միջոցառումներին, մասնավորապես՝

- տնօրենը, աշխատակիցները և մարզային համակարգողները հուլիսի 1-ին մասնակցել են «Մայքրոսոֆթ Արեյ» կազմակերպության «Գործընկերներ ուսման ոլորտում» (Partners in Learning, PiL) ծրագրի շրջանակներում կազմակերպած «Տեխնոլոգիաների և նորարար մեթոդների օգտագործումը հանրակրթության համակարգում» համաժողովի աշխատանքին և ներկայացրել երեք զեկուցումներ,
- տնօրենը և փոխտնօրենը մասնակցել են հուլիսի 4-5-ին Դիլիջանում «ՏՀՏ լիդերների առանց փողկապի հանդիպում» համաժողովին,
- տնօրենը մասնակցել է սեպտեմբերի 12-13-ին Աղվերանում «ՏՀՏ լիդերների առանց փողկապների հանդիպում» ֆորումին և հանդես եկել զեկուցումով,
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հրավերով ՏՀՏ բովանդակության բաժնի մասնագետն ընդգրկվել և մասնակցում է կրթահամալիրում իրականացվող մանկավարժական ծրագրերի ամենամյա 4-րդ բաց փորձաքննությանը:

15. Ստեղծվել և գործարկվել են ԿՏԱԿ-ի անխափան էլեկտրամատակարարման ինքնաշխատ համակարգը՝ էլեկտրասնուցման երկրորդ՝ պահեստային գծով, սերվերային և հարակից տարածքների հակահրդեհային և հակաառևանգման ահազանգման համակարգը, սերվերային սենյակի ջերմաստիճանի կարգավորման համակարգը: